

## **ԾՐԱԳԻՐ**

# **ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԿՏՐՈՒԿ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

Նմուշառման և լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման բաժնի կողմից իրականացվող սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների ներմուծման, արտահանման, մշակման, վերամշակման, արտադրության գործընթացներում ապրանքային խմբաքանակից նմուշների ընտրման, տվյալ ապրանքի համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված իրավական ակտերով, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով և չափով գլխավոր մասնագետների կողմից նմուշառման աշխատանքների իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված նպատակահարմար է ներգրավել փորձագետ:

Փորձագետն իրականացնում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների ներմուծման, արտահանման, մշակման, վերամշակման, արտադրության գործընթացներում ապրանքային խմբաքանակից նմուշների ընտրման, տվյալ ապրանքի համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված իրավական ակտերով, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով և չափով նմուշառման աշխատանքներ, սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների ներմուծման, արտահանման, մշակման, վերամշակման, արտադրության գործընթացներում լաբորատոր փորձաքննության համար նմուշները փոփոխությունից պաշտպանող նյութերից պատրաստված համապատասխան տարաներով փաթեթավորման, նմուշների ծածկագրման, կապարակնքման, նմուշառման ակտի ձևակերպման աշխատանքներ, կազմում է փորձարկման նպատակով ընտրված նմուշների ուղեկցող նամակը և ներկայացնում անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմին՝ փորձարկման լաբորատորիա:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետը սույն ծրագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական

ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- Ձկնային տնտեսություն կամ Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) կամ Քիմիա կամ Կենսաբանություն կամ Բնախոսություն (ֆիզոլոգիա) կամ կամ Կենսաքիմիա կամ Գյուղատնտեսական հումքի, պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում կամ Հողագիտություն կամ Բնապահպանություն (էկոլոգիա) մասնագիտություններով բարձրագույն կրթություն,

- առնվազն երկու տարվա մասնագիտական կամ քաղաքացիական ծառայության կամ քաղաքացիակն պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

- հայերեն և ռուսերեն լեզուների իմացություն,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Անասնաբուժության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքների իմացություն: